Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2018 թվականի սեպտեմբերի 11-ի N 136-Ա որոշման

Ծրագրի անվանումը	**ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ**
Մարզ	Շիրակի մարզ
Համայնքը /համայնքները	Գյումրի համայնք
Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից	125 կմ
Սահմանամերձ , բարձր լեռնային համայնք	Գյումրին սահմանամերձ, բարձր լեռնային համայնք չէ:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Գյումրի համայնքը, զբաղեցնելով 4400 հա տարածք, ունի 250 փողոց, որոնց ընդհանուր երկարությունը 181 կմ է, իսկ ընդհանուր մակերեսը՝ 2,2 մլն քառ. մետր և 12 հրապարակ՝ 75 600 քառ. մետր ընդհանուր մակերեսով: Փողոցներից 90-ը՝ 84,3 կմ երկարությամբ (1,11 մլն քառ. մետր մակերեսով) ասֆալտապատ են, իսկ 160-ը՝ 96,7 կմ երկարությամբ (1,09 մլն քառ. մետր մակերեսով)՝ առանց ասֆալտապատյա շերտի: Գյումրիում ներկայումս ընթանում են «Կումայրի» պատմական կենտրոնի ենթակառուցվածքների՝ մասնավորապես փողոցների, մայթերի, լուսավորության վերականգնման աշխատանքներ: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի վարկային ծրագրի միջոցներով արդեն մեկնարկել է «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիրը, որով նախատեսվում է 12 փողոցների և 3 հրապարակների հիմնանորոգման, մայթերի վերականգնման, լուսավորության արդիականացման աշխատանքներ: Հիմնանորոգման արդյունքում 3 առանց ասֆալտապատյա շերտի փողոցներ (2 377 մետր երկարությամբ) կդառնան ասֆալտապատ, որն էլ իր հերթին կավելացնի մաքրման կարիք ունեցող փողոցների մակերեսը: Համայնքապետարանի առկա հատուկ ավտոտրանսպորտային միջոցներով հնարավոր է մաքրել ընդամենը 800 000 քառ. մետր ասֆալտապատ մակերես: Առկա ինքնաթափ մեքենաները օգտագործվում են թե կոմունալ, թե աղբահանության աշխատանքների համար: Ձմռանը, երբ ինքնաթափ մեքենաները օգտագործվում են հրապարակների և փողոցների աղով և ավազով մշակելու նպատակով, հնարավոր չէ այդ աշխատանքները կատարել ամբողջ քաղաքի տարածքում միաժամանակ:

	Վերոգրյալ խնդիրների լուծումը հնարավոր չէ արդյունավետ իրականացնել համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հատուկ ավտոտրանսպորտային միջոցների քանակով և որակով: Գյումրու զբոսաշրջային ներուժը լիարժեք խթանելու և զարգացնելու համար, ինչպես նաև վերականգնվող հրապարակների, փողոցների և մայթերի շահագործումը երկարացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կոմունալ ծառայության ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերման: Ուստի, ծրագրի շրջանակում առաջարկվում է ձեռքբերել 1 հատ անիվային բազմաֆունկցիոնալ ամբարձիչ, 1 հատ բազմաֆունկցիոնալ մեքենա (բոլոր սեզոնների համար) և 1 հատ փոշեկուլ մեքենա: Կից ներկայացված են սույն մեքենաների տեխնիկական բնութագրերը և գնային առաջարկները հարցված երեք կազմակերպություններից:
Ծրագրի իրականացման նպատակը	Գյումրին, հանդիսանալով Հանրապետության երկրորդ խոշոր քաղաքը, ունի պատմամշակութային հարուստ ժառանգություն, և այդ ժառանգությունը քաղաքի զբոսաշրջային գրավչության բարձրացման հարցում խթանող ներուժ է հանդիսանում: Ծրագրի արդյունքում ձեռք բերվող մաքրման հատուկ տեխնիկաները կծառայեն Գյումրու պատմական կենտրոնի վերականգնվող փողոցների և հրապարակների մաքրման աշխատանքների հավուր պատշաճի իրականացմանը՝ մաքուր և հարմարավետ միջավայր ստեղծելով քաղաքի բնակչության և զբոսաշրջիկների համար: Այն իր դրական ազդեցությունը կունենա քաղաքի զբոսաշրջության զարգացման վրա, թույլ կտա մշակույթը, զբոսաշրջային գրավչությունը լիարժեք ներկայացնել հյուրերին: Ծրագրի իրականացման նպատակներից է նաև վերականգնվող հրապարակների, փողոցների և մայթերի շահագործման ժամկետների երկարացում, կոմունալ ծառայության ոլորտում արդյունավետության բարձրացումը:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում	Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է համայնքին սեփականության իրավունքով պատկանող տեխնիկատրանսպորտային միջոցների հաշվեկշռային արժեքի էական ավելացում: Կոմունալ ծառայության ավտոտրանսպորտային 3 հատուկ միջոցների ձեռքբերմամբ կպակասի առկա ավտոմեքենաների ծանրաբեռնվածությունը, որի արդյունքում կապահովվի մեքենաների շահագործման արդյունավետությունը, կնվազի մեքենաների հետագա մաշվածության չափը և կերկարի մեքենաների շահագործման ժամկետները:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի	Ծրագրի իրականացման արդյունքում Գյումրի համայնքի կոմունալ տնտեսությունը կհամալրվի առնվազն 3 նոր մեքենաներով՝ ստեղծելով հավելյալ 10 աշխատատեղ, որը հնարավորություն կընձեռի ավելացնել

Իրականացման նպատակին	համայնքի նորակառույց հրապարակների, փողոցների և մայթերի մաքրման աշխատանքների հաճախականությունը, արդյունավետությունը և մաքրվող տարածքների մակերեսը: Ծրագրի իրականացման արդյունքում Գյումրին՝ քաղաք այցելող հյուրերի, զբոսաշրջիկների և համաքաղաքացիների համար կլինի ավելի կոկիկ, մաքուր և հարմարավետ, որն էլ իր հերթին կնպաստի Գյումրին, հատկապես պատմական կենտրոնը, այցելուներին հավուր պատշաճի ներկայացնելուն և համապատասխան զբոսաշրջային այցերի կազմակերպման խթանմանը:
Ծրագրի յուրաքանչյուր արդյունքին հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները	Ծրագրի իրականացման միջոցառումներն են՝ • Համապատասխան գնումների գործընթացի կազմակերպում (օգոստոս), • Արդյունքների ամփոփում, համապատասխան պայմանագրերի կնքում (սեպտեմբեր), • Ավտոտրանսպորտային միջոցների տեղափոխում Գյումրի (սեպտեմբեր), • Համապատասխան ֆինանսական միջոցների փոխանցում մատակարարին (սեպտեմբեր), • Համապատասխան հաստիքների համալրում (հոկտեմբեր), • Ավտոտրանսպորտային միջոցների շահագործում (հոկտեմբեր):
Ծրագրի ազդեցությունը շահառուների վրա	Վերոգրյալ ծրագրի շահառուներն են՝ • Գյումրու բնակչությունը, • Գյումրի այցելող հյուրերը և զբոսաշրջիկները, • Ծրագրի շրջանակներում ձեռք բերվող ավտոտրանսպորտային միջոցները շահագործող անձիք (մոտ 10 անձ): Ծրագրի իրականացման արդյունքում Գյումրի այցելող հյուրերի, զբոսաշրջիկների և բնակչության համար կապահովվի մաքուր և հարմարավետ միջավայր, իսկ ավտոտրանսպորտային միջոցները շահագործող անձիք՝ ստանալով աշխատանք, կբարելավեն իրենց սոցիալական վիճակը:
Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր	Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է 10 հիմնական աշխատատեղի ստեղծում, որից 3-ը՝ վարորդի հաստիքով, իսկ 7՝ բանվորի՝ համապատասխանաբար 170 000 և 108 300 ՀՀ դրամ աշխատավարձերով:
Ծրագրի սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքները	Ծրագրի իրականացման միջնաժամկետ արդյունքներն են՝ • համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող կոմունալ ծառայության ավտոտրանսպորտային միջոցների

ծանրաբեռնվածության նվազում, ավտոմեքենաների շահագործման արդյունավետության բարձրացում,

- փողոցների մաքրման աշխատանքների արդյունավետ և ժամանակին իրականացում,
- ձմռանը փողոցների մաքրման և հատուկ նյութերով մշակման աշխատանքների միաժամանակյա իրականացում:
- Գյումրու բնակչության, քաղաք այցելող հյուրերի և զբոսաշրջիկների համար հարմարավետ և մաքուր միջավայրի ապահովվում,
- նոր աշխատատեղերի ստեղծում:

Ծրագրի իրականացման երկարաժամկետ արդյունքներն են՝

- հատուկ տեխնիկայով մաքրվող հրապարակների, փողոցների և մայթերի շահագործման ժամկետի երկարացում,
- համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող կոմունալ ծառայության ավտոտրանսպորտային միջոցների հետագա մաշվածության նվազում,
- զբոսաշրջության խթանում:

Համայնքի 2017 թվականի բյուջեն և բյուջեի կատարողականը

	Պլան	Ծախսեր
Վարչական	3 089 058 948	2 979 851 253
Ֆոնդային	249 558 300	205 132 498

Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեի ֆոնդային մասից կատարված ծախսեր են՝

		Պլան	Ծախսեր
Շենքերի և շինությունների կառուցում	5112	1740000	1479000
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	203583300	177423278
Տրանսպորտային սարքավորումներ	5121	10000000	0
Վարչական սարքավորումներ	5122	15800000	14117040
Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	13135000	8888180
Աճեցվող ակտիվներ	5131	2000000	1920000
Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	750000	750000
Նախագծահետազոտական ծախսեր	5134	2550000	555000

Համայնքի 2018 թվականի բյուջեն

Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեն կազմում է 3 510 565 800 ՀՀ դրամ: Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի պլանավորված ծախսեր են՝

- վարչական՝ 3 075 742 000,
- ֆոնդային՝ 434 824 200:

Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսեր են՝

	Տնտեսագիտական հոդված	Պլան
Շենք և շինությունների ձեռքբերում	5111	70 807 000
Շենքերի և շինությունների կառուցում	5112	5 340 000
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	248 017 200
Վարչական սարքավորումներ	5122	12 450 000
Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	93 542 000
Աճեցվող ակտիվներ	5131	2 120 000
Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	298 000
Նախագծահետազոտական ծախսեր	5134	2 250 000
Ընդամենը		434 824 200

.

Համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով 2018 թվականի կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի հաշվին սույն ծրագրի ամբողջական իրականացումը հնարավոր չէ: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ համայնքի բյուջեի շուրջ 98% ուղղվում է համայնքի պարտադիր խնդիրների իրականացմանը: Ֆինանսական միջոցների մնացած մոտ 2% ուղղվում է համայնքի կամավոր խնդիրների լուծմանը, որով փորձ է արվում ինչ-որ չափով մեղմելու համայնքի սոցիալապես խիստ անապահով բնակչության հոգսերը:
Ծրագրի ընդհանուր բյուջեն	93 900 000 ՀՀ դրամ (100%)
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	56 340 000 ՀՀ դրամ (60 %)
Այլ ներդրողներ	0 ՀՀ դրամ (0 %):
Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբ՝ օգոստոս 2018թ. Տևողությունը՝ 3 ամիս

Ծրագրի ծախսերը	Ծրագրի արժեքը հաշվարկվել է «Կամազ Արմենիա» ՓԲԸ-ի, «Գալոպեր» և «ՄԶՄ» ՍՊ ընկերությունների կողմից տրամադրված տեխնիկական բնութագրերի և ֆինանսական գնահարցումների (կից ներկայացված է) արդյունքում:
Ամսաթիվ	«31» հուլիսի 2018թ.

Այլ տեղեկություններ ծրագրի մասին. *Այս պահին չի ներկայացվում սույն ծրագրին մասնակցելու վերաբերյալ Գյումրի համայնքի ավագանու որոշումը, քանի որ համայնքի ավագանու նստաշրջանը ավարտվել է: Սույն ծրագրին մասնակցելու վերաբերյալ Գյումրի համայնքի ավագանում որոշումը լրացուցիչ Ձեզ կներկայացվի սեպտեմբեր ամսին:*

Ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետ՝ *Արմեն Հովհաննիսյան*
Հեռախոս, էլ. Փոստ՝ *(+374 312) 2 22 24, (+374 94) 55 99 70, a.hovhannisyan@gyumricity.am*